«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 28/02

ք. Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ 23.08.2018թ. ժամը 17:30

Համաձայն 07.08.2018թ. գրությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 09.08.2018թ-ին ստացված, «Գազպրոմբանկ» բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Արթուր Բաբայանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Տիգրան Հարությունյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Օգոստոսի 23-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ «Գազպրոմբանկ»բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Արթուր Բաբայանը
«Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Տիգրան Հարությունյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու՝ «Գազպրոմբանկ»բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Արթուր Բաբայանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
07.08.2018թ. գրությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 09.08.2018թ-ին ստացված,«Գազպրոմբանկ» բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Արթուր Բաբայանի դիմում-բողոքի հիքով «Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Տիգրան Հարությունյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի նախագահ Տ.Հարությունյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծերի վերաբերյալ հարցի քննարկում, ինքը որպես հանձնաժողովի անդամ և նախագահող ինքնաբացարկ է հայտարարում և առաջարկեց այս նիստը վարելու համար ընտրել նիստը վարող-նախագահող ու քվեարկությունը կազմարպել առանց իր ձայնի:
Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան ու առաջարկելով,որպես

հանձնաժողովի այս նիստին նախագահող՝Արմենակ Աղամյանի թեկնածությունը,հարցը դրեցին քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – 07.08.2018թ. գրությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 09.08.2018թ-ին ստացված, «Գազպրոմբանկ» բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Արթուր Բաբայանից ստացված՝ «Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմում-բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը և դիմումներում նշված փաստական հանգամանքների քննարկման համար, ս/թ-ի Օգոստոսի 23-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստով ընդունել հանձնաժողովի անդամ-նախագան Տիգրան Հարությունյանի ինքնաբացարկը և սույն նիստում նախագահող ընտրել հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանին:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահող՝ Արմենակ Աղամյանը նիստը հայտարարեց բացված և համաձայն աշխատանքային կարգի դիմումը ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց դիմումատուին: «Գազպրոմբանկ»բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝ փաստաբան Արթուր Բաբայանը ներկայացրեց դիմում-բողոքը՝ «Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի վերաբերյալ, հանձնաժողովին ներկայացրեց իր լիազորությունների վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր:
Հանձնաժողովի նահագահողը հարցրեց դիմումատուին այլ փաստական հանգամանքներին և ապացույցների առկայության և ներկայացման մտադրության մասին:Դիմումատուն պատասխանեց,որ այլ հիմքեր և ապացույցներ այդ պահին չունի ներկայացնելու:
Նախագահողը առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել «Գազպրոմբանկ»բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝ փաստաբան Արթուր Բաբայանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝09.08.2018թ-ին ստացված դիմում-բողոքը՝«Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 1.4 կետի հիմքով, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:
Հանձնաժողովի անդամ Հենրիկ Մարտիկյանը հայտնեց այն կարծիքը,որ դիմում-բողոքում նշված բոլոր փաստական հանգամանքների վերաբերյալ բանկը չի ներկայացրել ոչ մի ապացույց,ավելին դիմում նշված է, որ որոշ հանգամանքների և կասկածների հիմք է ծառայել գնորդի բանավոր հայտարարությունը, այդ պարագայում իր կարծիքով կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չկան, քանի որ ոչ մի փաստ ներկայացված չէ հիմնավոր՝ այլ միայն կասկածների և բանավոր հայտարարությունների հիման վրա ձևավորված կարծիք և դրա արդյունք անհասկանալի նպատակով դիմում-բողոք:
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը հայտնեց իր կարծիքը կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ առ այն, որ բանկը հիմնականում բողոքում է իրացված գույքի պակաս լինելու փաստից, որ ի դեպ հիմնավորում է գնորդի բանավոր հայտարարությամբ, անհասկանալի է բանկի դիրքորոշումը վաճառված գրավի առարկային գնորդին հանձնելու գործընթացով հետաքրքրվելու և դրան մասնակցելու ցանկության,այդ թվում սույն բողոքի առկայության հիմքերը, քանի որ ըստ էության ապահովված պարտատիրոջը պետք է հետաքրքրեր իրացված գույից առաջացած միջոցների մուտքագրման և դրանց բաշխման գործընթացը: Վերլուծելով դիմում-բողոքը բաշխման մասով առկա փաստական հանգամանքների պարզաբանման համար, իր կարծիքով պետք է հարուցել կարգապահական

վարույթ և վարույթի ընթացքում լսել կառավարչի պարզաբանումները իր անգործության փաստի վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ նախագահող՝Արմենակ Ադամյանը հայտնեց իր կարծիքը առ այն,որ դիմում նշված հանգամանքները առկրույթ կարող են պարունակել կառավարչի կողմից կարգապահական կանոնների խախտումներ և այդ փաստերը քննելու և կառավարչի պարզաբանումները լսելու համար անհրաժեշտ է հարուցել կարգապահական վարույթ:

Հանձնաժողովի մնացած անդամները քննարկեցին հարցը և համաձայնեցին կարծիքի հետ:

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվեարկության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 1

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Գազպրոմբանկ»բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝ փաստաբան Արթուր Բաբայանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝09.08.2018թ-ին ստացված դիմում-բողոքի հիմքով՝«Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ եզրակացության գալու համար, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝

Հանձնաժողովում նախագահող՝Արմենակ Ադամյանը դիմում-բողոքում նշված փաստական հանգամանքների վերաբերյալ բացատրություններ և պարզաբանումներ տալու համար ձայնի իրավունք տվեց՝«Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանին,ով ներկայացրեց որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 28.04.2015թ-ին կայացված թիվ ԱՐԴ/0052/04/14 վճռի հիմքով «Լևոն»ՍՊ ընկերությունը ճանաչվել է սնանկ,նույն դատարանի 28.05.2015թ-ի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել՝Տիգրան Հարությունյանը:

Ստանձնելով սնանկության գործով կառավարչի պարտականությունները կառավարչի կողմից կատարվել են օրենքով սահմանված բոլոր գործառույթները,այդ թվում գույքագրվել է պարտապանին և պարտապանի պարտավորությունների կատարումն ապահովվող երրորդ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքը:Գույքագրված գույքի օրենքով սահմանված կարգով շուկայական արժեքի որոշման համար ,բանկի իրավանախորդի բանավոր համաձայնությունը ստանալով,պայմանագիր է կնքվել «Անիկոմ»ՍՊ գնահատող մասնագիտացված ընկերության հետ,որ կողմից էլ գնահատվել է գույքագրված գույքը:

Գույքագրված և գնահատված գույքի իրացման ծրագրը քննարկելու համար հրավիրվել է պարտատերերի ժողով և քննարկելով հարցը և ստանալով պարտատերերի համաձայնությունը հրապարակային սակարկությունների միջոցով գույքի իրացման վերաբերյալ;Միջնորդել եմ դատարան՝ աճուրդի թույտվություն ստանալու համար: Դատարանը իր 15.06.2017թ-ին որոշմամբ դադարեցրել է երկու լոտերի անշարժ գույքերի գրավի իրավունքները և վերացրել է կիրառված արգելանքները ու սահմանափակումները, քանի որ երրորդ անձ գրավատուի կողմից սնանկության հատուկ հաշիվ է մուտքագրվել գույքի գնահատված և աճուրդի մեկնարկային գինը՝8 300 000 ՀՀ դրամի չափով:Դատարանը իր 16.06.2018թ-ի որոշմամբ տվել է թույլտվություն մնացած գույքագրված և գնահատված գույքը 12 լոտերով իրացնելու համար կազմակերպել հրապարակային սակարկություններ: Կատավարչի կողմից կազմակերպվել են հրապարակային սակարկություններ/աճուրդներ և կրկնաճուրդներ/, որոնց ընթացքում թիվ 9-րդ և 11-րդ լոտերի կրկնաճուրդները դադարեցվել են իսկ լոտ թիվ 1-ը 18.07.2018թ-ի մասնակի կայացած աճուրդում իրացվել է՝1 909 208 ՀՀ դրամ գումարով:

Գույքի իրացման վերաբերյալ 20.07.2018թ-ին գնորդի հետ կնքվել է թիվ 01-Ա առուվաճառքի պայմանագիրը, որի 2-րդ կետով սահմանվել էր՝ գնորդի գնած թվով 132 564 հատ տարբեր տարողությամբ բանկաները հանձնել եռօրյա աշխատանքային ժամկետում:

Նույն պայմանագրի 3-րդ կետով գնորդը պարտավորվել է ընդունել գնված ապրանքը և իր տրանսպորտային միջոցներով տեղափոխել այն: Կնքված պայմանագրի կատարման ժամկետների վերաբերյալ գնորդի հետ կայացել է քննարկումներ և վերջինս նշել է, որ ինքը չի կարող ստորագրել ընդունման-հանձնման ակտ մինչև չստուգի տարվող ապակյա բանկաների որակը, քանի որ դրանք օգտագործված լինելով կամ ժամանակի ընթացքում ջարդված կամ վնասված լինելով դարձել են հետագա օգտագործման համար ոչ պիտանի:Այդ պատճառով գնորդի կողմից տարաները ընդունվում են հատ հատ իր աշխատակիցների կողմից զննելուց հետո, որը աշխատատար և ժամանակատար գործընթաց է, և մինչ օրս կատարվել ու տարվել է 62 300 հատ տարբեր տարողությամբ բանկաներ, որից ակտով ստորագրվել է 46 300 հատի վերաբերյալ:

Մնացած ապրանքատեսակներին ներկայումս զննվում և գնորդի կողմից կազմակերպվում է դրանց տեղափոխումը ու դրա ժամանակի առումով կազմակերպումը կապված է միայն գնորդի իր աշխատանքների կազմակերպման հնարավորությունների հետ:Իսկ գնորդի կողմից կառավարչին գնված ապրանքի քանակի վերաբերյալ ոչ մի դժգոհություն չի ներկայացվել, քանի որ կառավարչի կողմից գնորդին է տրամադրվել ողջ գնված ապրանքատեսակնին՝ ըստ քանակի և տեսակի: Կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց գույքագրման ակտը, աճուրդի արձանագրությունը, վճարման անդորրագրերը, Առուվաճառքի պայմանագիրը, մասնակի ընդունման-հանձնման 28.07.2018թ-ի ակտը և նշեց, որ կարող է տվյալ պահին հեռախոսակապ հաստատել գնորդի հետ իր ներկայացրած փաստերի հաստատման համար:

Կառավարիչը ներկայացրեց նաև, որ սնանկության հատուկ հաշվին երրորդ անձ գրավատուի կողմից մուտքագրված գումարները չէին կարող բաշխվել,քանի որ այդ օրվա դրությամբ առկա չէր պատշաճ «Պարտատեր»: 07.02.2018թ-ին դատարան ներկայացված միջնորդությունը քննարկվել է դատական կարգով և 19.02.2018թ-ի դատարանի ԱԴՎ/0052/04/14 որոշմամբ լուծվել է պատշաճ «Պարտատիրոջ» փոփոխության հարցը, իսկ նրա ներկայացուցչի հարցը մերժվել է:Պարտատիրոջ պատշաճ ներկայացուցչի կողմից 16.05.2018թ-ին դատարան է ներկայացվել դիմում բաշխում կատարելու և համապատասխան հաշվին փոխանցելու համար:

Դիմումը ստանալուց հետո սկսվել է բաշման ծրագրի կազմման հաշվարկների իրականացումը,որը իր մեջ կրում է դժվարություններ կապված աշխատանքների/վարչական ծախսերի հաշվարկման,պահակների մոտ 3 տարվա համար աշխատավարձերի հաշվարկման/ մեծածավալ լինելու և առաջին բաշխումը լինելու առումով:Այդ պատճառով բաշխման ծրագրի կազմման աշխատանքները ժամանակատար են ստացվել և պատրաստ էին 18.07.2018թ-ի դրությամբ,իսկ 18.07.2018թ-ին կայացած աճուրդից ստացված միջոցները նույնպես արդեն կազմված բաշման ծրագրում ներգրավվելու համար նույնպես անհրաժեշ էր ժամանակ,որը կառավարչի կողմից կատարվել է և 23.07.2018թ-ին բաշխման ծրագիրը ուղարկվել է կողմերին և դատարանին,պարտատեր՝«Գազպրոմբանկ»ԲԸ նույնպես ուղարկվել է ծրագիրը և հավելվածները՝23.07.2018թ-ին,որը ստացվել է պարտատիրոջ կողմից 24.07.2018թ-ին և զարմանալի է,որ 07.08.2018թ-ի ամսաթվով նշագրված դիմում բողոքում պարտատերը նշում է,որ կառավարիչը բաշխում չի կատարում:Նշեմ նաև որ մինչև բողոք գրելը պարտատիրոջ կողմից առարկություն է ներկայավել դատարանին բաշման ծրագրի դեմ և նմանատիպ դիմում-բողոք է ներկայացրել նաև դատարանին,որի քննարկման համար դատարանը դեռ նիստ չի նշանակել:

Ինչ վերաբերվում է ապահովված պարտատիրոջ այն կասկածներին մնացած/դեռ չիրացված/ գրավի առարկա գույքերը ամբողջականության վերաբերյալ ապա հայտնեմ,որ գույքի պահպանությունը կատարվում է պահակների միջոցով,որոնք ընդունվել են աշխատանքի օրենքով սահմանված կարգով և նախկին պարտատիրոջ համաձայնությամբ,որի հետ համաձայնեցվել են պահակների և քանակը և աշխատավարձերի չափը:Արդեն շուրջ 3 տարի է պահակների միջոցով իրականացվում է գույքի պահպանությունը և պահակները վճարվել են մասնակի 1/3-ի չափով,իսկ այժմ նոր պարտատերը առարկություն է ներկայացնում գույքի պահպանության համար բաշխման ծրագրով նախատեսված գումարներին,այսինքն պարտատերը ցանկանում է,որ գույքը պահպանվի ամբողջական,բայց չի ցանկանում որ դրա

համար վճարվի պարտապանի միջոցներից,քանի որ այդ չափով պակաս կվճարվի իր պահանջի բավարարումը,այսինքն պարտատերը կառավարչին կոչում է «անբարեխիղճ», որ կառավարիչը շուրջ 3 տարի է առանց վարձատրության՝ միջոցներ է ձեռք առնում պահպանելու գրավի առարկաները,միջոցներ է ծախսում դրանք իրացնելու և պարտատիրոջ պահանջները բավարարելու, համար:Կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց բաշխման ծրագիրը,ծանուցումը,ետադարձի անդորագիրը,դիմումները,որոշումը և առարկությունը:

Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ու «Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Տիգրան Հարությունյանի ներկայացրած բացատրությունները:

Հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը ձայնի իրավունք վերցրեց և մասնավորապես նշեց,որ կառավարչի կողմից սահմանված կարգով կատարվել են իր պարտականությունները, մասնավորապես՝գույքի գույքագրում,պահպանություն, գնահատում, իրացման կազմակերպում,ներկա պահին կատարվում են իրացված գույքի ընդունում-հանձնում և մուտքագրված գումարների բաշխում,պահանջների բավարարում նպատակով,ըստ էության դիմումատուի բողոքը վերաբերվում է գույքի հանձնման պռոցեսին,որը իր կարծիքով չի իրականացվում պատշաճ կարգով,բայց իր համար անհասկանալի է թե բանկ-պարտատիրոջ համար ինչ նշանակություն կամ ինչ բողոքի առիթ է,իրավունքի խախտումների առումով,իրացված գույքի հանձնելու պռոցեսը:

Առաջադրված հարցին պարզաբանում տվեց բանկի ներկայացուցիչը և մասնավորապես նշեց. որ իրավունքի խախտման մասին չէ խոսքը այլ բանկի իմիջի պահպանման հարց է,որը բանկի համար շատ կարևոր է:

Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը ձայնի իրավունք վերցրեց և արտահայտեց այն կարծիքը,որ եթե բանկը բանավոր հայտարարության հիման վրա կասկածներ է արտահայտում գույքի փաստացի առակայության վերաբերյալ,ապա դա արդեն կասկածներ է արտահայտում առ այն որ գույքը գողացվել է,որի մասին պետք է ոչ թե Հասարակական կազմակերպությանը կամ դատարանին դիմում-բողոք գրի,այլ հայտարարություն տա համապատասխան մարմնում գողության մասին,որը բանկը չի կատարում:Ներկա պահին կառավարչի կողմից ներկայացվեց հանձնած և ընդունած ապրանքի վերաբերյալ ակտ ավելի շատ քանակով քան բանկի դիմում էր առծածվում և բացատրություն տվեց ընդունման հանձնման աշխատանքների կատարման և դրաց գործընթացում առկա պռոբլեմների վերաբերյալ,որը հիմնականում կապված էին գնորդի գործողությունների հետ,այսինքն պայմանագրի չկատարումը կապված է ոչ թե կառավարչի գործողությունների կամ գույքի չլինելու հետ այլ կապված են գնորդի կողմից,գույքի որակի ստուգման և դրանց տեղափոխման աշխատանքների կազմակերպման հետ,որի վերաբերյալ բանկը ոչ մի առարկություն չի ներկայացնում,տեղեկատվություն չունենալու պատճառաբանությամբ:Վերոգրյալի հիմքով իր կարծիքով կառավարչի կողմից կարգապահական կամ օրենքի խատումներ գույքի հանձնման-ընդքունման աշխատանքների կատարման մեջ առկա չէ,բայց կառաջարկեր հաձնարարել կառավարչին աշխատանքները կազմակերպել ողջամիտ ժամկետներում և գրավոր տեղեցնել կազմակերպությանը:

Ինչ վերաբերվում է դրամական միջոցների բաշխման ծրագրի մոտ երկու ամիս հետո դատարան ներկայացնելուն,ապա կառավարչի բացատրությունները այդ առումով կարող են ընդունելի լինել քանի որ ինչպես պռակտիկան է ցույց տալիս միշտ առաջին բաշխման ծրագիրը կազմելու համար անհրաժեշտ է լինում ի մի բերել բոլոր վարչական ծախսերը,դրանց հիմնավորող փաստաթղթերը,այս դեպքում դրանք երեք տարվա ընթացք ունեն և կառավարչի համար դժվարություն կարող էր ստեղծվել այդ առումով,բայց եթե հաշվի առնենք,որ կառավարիչը նույնպես երեք տարի վարձատրություն չի ստացել,ուստի նա նույնպես շահագրգռված է ինչքան հնարավոր է արագ կազմակերկել այդ գործընթացը և ուշացնելը նրա շահերից չի բխում:

Հանձնաժողովի նախագահող՝Արմենակ Ադամյանը համաձայնելով կարծիքի հետ պարզաբանեց,որ կառավարիչը ըստ էության շահագրգռված չէ բաշխման ծրագիրը ուշացնելու մեջ,ուստի նրա բերած հիմնավորումները կարելի է ընդունել որպես հիմք ,բացի դրանից «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասը չի սահմանում որևէ ժամկետ,

դրամական միջոցները բաշխելու համար,իսկ կառավարիչի մնացած գործողությունները համընկնում են օրենքի սահմանած կարգին:

Հանձնաժողովում նախագահող Արմենակ Ադամյանը արտահայտեց այն կարծիքը, որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ:Կառավարչի գործողությունները իրականացվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի սահմանած կարգի և Առուվաճառքի պայմանագրի,համաձայն, իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ու առաջարկեց հարուցված կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ,բայց հանձնարարել կառավարչին ողջամիտ ժամկետում կազմակերպել ընդունում-հանձնումը և դրա կատարման մասին գրավոր տեղեկացնել «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ Խորհրդին:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին առաջարկին և հանձնաժողովի նախագահն առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ

1.07.08.2018թ. գրությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 09.08.2018թ-ին ստացված, «Գազպրոմբանկ» բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Արթուր Բաբայանից ստացված՝ «Լևոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել,քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 82-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ և /ժբ/կետերով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Հանձնարարել սնանկության գործով կառավարչին ողջամիտ ժամկետում Առուվաճառքի պայմանագրի սահմաններում կազմակերպել և իրականացնել գնված գույքի ընդունում-հանձնումը և դրա կատարման մասին գրավոր տեղեկացնել «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ Խորհրդին:

3.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

4.Սույն եզրակացությունը հրապարակել Կազմակերպության ինտերնետային կայքում եռօրյա ժամկետում:

Հանձնաժողովի Նախագահող՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան